ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ

ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023-2024 ուստարի, 1-ին կիսամյակ

Թեմա ՝ Արարատ քաղաքի ծառերը և թփերը և դրանց արդյունավետությունը կանաչապատման համար

Առարկա ՝ կենսաբանություն + ռուսաց լեզու

Դասարան ՝ VII

Ուսուցիչ՝ Ժաննա Ավագյան

<u>Նախագծային աշխատանքի մասնակիցները՝</u>

1. Մանուկյան Նարե Արմենի
2. Հակոբյան Տաթև Արթուրի
3. Գրիգորյան Էլեն Արտաշեսի
4. Առաքելյան Մանուկ Արամի
5. Հակոբյան Մանե Վահագնի
6. Թորոսյան Վահագն Գագիկի
7. Մարգարյան Ծաղիկ Հայկազի
8. Պետրոսյան Արամ Համլետի
9. Սուսունյան Արման Սասունի
10. Գևորգյան Լիլիթ Գագիկի
11. Ավետիսյան Մարինե Ահարոնի
12. Հարությունյան Սուսաննա Գևորգի

<u>Ուսումնական նախագծի աշխատանքը տևել է 7 շաբաթ՝ հետևյալ պլանավորմամբ</u>

Օրը	ամսաթիվը	Օրվա աշխատանքը
1	11/10/2023	Նախագծի նպատակների և վերջնարդյունքների հետ ծանոթացում, բաժանում խմբերի ըստ թաղամասերի, ծառերից և թփերից տերևների նմուշառում, տվյալների համակարգում
2	18/10/2023	Բերված նմուշների հիման վրա կատարվում է որոշչով աշխատանք: Գտնում են ներկայացված բույսերի գիտական և հայկական անվանումները:
3	1/11/2023	Հաշվում են տերևների մակերեսը, գնահատում ծառը կանաչապատման և հովը ապահովելու տեսակետից:

4	8/11/2023	Ուսուցչի տրամադրած աղբյուրներից համացանցից տվյալների /արագ աճող, երկարակյաց, երաշտադիմացկուն բույսեր/ որոնում, համադրում, վերլուծում:
5	15/11/2023	Ռուսաց լեզու – աշխատանք բառարանի հետ: Օրինակի հիման վրա բույսերի հայկական անունների թարգմանություն ռուսերենով:
6	22/11/2023	Միջանկյալ արդյունքների գնահատում, առկա խնդիրների լուծում, թերակատարումների շտկում, ներկայացման եղանակի ընտրություն, նախագծի վերջնարդյունքի ներկայացման ձևի քննարկում
7	29/11/2023	Վերջնական արդյունքի ներկայացում, գնահատում:

<u>Նախագծային աշխատանքի իրականացման նպատակն է՝</u>

- Ծանոթանալ քաղաքում աճող ծառերի և թփերի տեսակային բազմազանությանը
- Որոշիչների միջոցով գտնել դրանց անվանումը
- Բառարանների շնորհիվ գտնել ծառատեսակների և թփերի ռուսերեն անունները
- Գնահատել տվյալ ծառերը և թփերը կանաչապատման տեսանկյունից
- Համագործակցել խմբի անդամների հետ
- Գտնել առաջ եկող խնդիրների սեփական լուծման տարբերակները

<u>Նախագիծը իրկանացվել է հետևյալ փուլերով</u>՝

1. Հիմնախնդրի և նրանից բխող հետազոտական խնդիրների որոշում: Կարելի է իրականացնել «մտքերի տարափի» կամ «կլոր սեղանի», մինի սեմինարի կազմակերպմամբ:

2. Հիմնախնդրի լուծման վարկագծի առաջադրում:

3. Հետազոտության մեթոդի ընտրություն՝ փորձ, դիտում, վիճակագրական տվյալների հավաքում և այլն:

4. Ստացված տվյալների հավաքում, համակարգում ու վերլուծություն:

5. Վերջնական արդյունքների ձևավորման եղանակների մշակում՝ շնորհանդես, պա շտպանություն, հաշվետվություն և այլն:

6. Արդյունքների ամփոփում, ձևավորում և դրանց ներկայացում:

<u>Նախագիծը ուղղված է հետևյալ կարողունակությունների զարգացմանը</u>՝

- Սովորել սովորելու կարողունակություն
- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
- Թվային և մեդիա կարողունակություն

<u>Նախագծի վերջնարդյունքները՝՝</u>

- ✓ Կարողանալ դաշտային աշխատանքների ընթացքում հավաքել նմուշներ, դրանք դասակարգել, աշխատել որոշիչով,
- ✓ Տարբեր աղբյուրներից գտնել տեղեկություն, վերլուծել այն,
- ✓ Հաղորդակից դառնալ համայնքային խնդիրների լուծմանը, առաջարկելով կանաչապատման համար արդյունավետ ծառատեսակներ,
- ✓ Արժևորել շրջակա միջավայրի պահպանման կարևորությունը:

Նախագծային աշխատանքի ամփոփումը կատարվեց պրոդուկտի տեսքով. դրանք էին՝ հերբարիումը և գրքույկը: Հերբարիումը կօգտագործվի դպրոցում որպես դիդակտիկ պարագա, իսկ գրքույքում հավաքագրված և վերլուծման արդյունքում ստացված տվյալները՝ որ ծառատեսակներն են ավելի նպատակահարմար կանաչապատման համար, ներկայացվել են քաղաքապետարանի համապատասխան բաժին:

Նախագծային աշխատանքի մասնակիցները գնահատվել են ինքնագնահատման թերթիկի, նախագծի ղեկավարի և հանձնաժողովի գնահատումների հիման վրա: Այն ներկայացված է նախագծի ծրագրում: Ըստ այդմ աշակերտները ստացել են հետևյալ գնահատականները:

1. Մանուկյան Նարե Արմենի՝ 8
2. Հակոբյան Տաթև Արթուրի՝ 9
3. Գրիգորյան Էլեն Արտաշեսի՝ 9
4. Առաքելյան Մանուկ Արամի՝ 7
5. Հակոբյան Մանե Վահագնի՝ 8
6. Թորոսյան Վահագն Գագիկի՝ 9
7. Մարգարյան Ծաղիկ Հայկազի՝ 9
8. Պետրոսյան Արամ Համլետի՝ 9
9. Սուսունյան Արման Սասունի՝ 8
10. Գևորգյան Լիլիթ Գագիկի՝ 8
11. Ավետիսյան Մարինե Ահարոնի՝ 8
12. Հարությունյան Սուսաննա Գևորգի՝ 9

Առաջարկություններ ծրագրի բարելավման համար

Նախագծի մասնակիցների և սեփական դիտարկումների հիման վրա կատարեցի վերլուծություն: Հետագայում ծրագիրը իրականացնելու համար կփոխեմ հետևյալ կետերը՝

- ✓ Հայերեն լեզվով չգտանք ծառերին վերաբերվող որոշիչ , աշխատել ենք « Հայաստանի դենդրոֆլարան» երկհատորյակով,
- ✓ Նախագծի համար նախատեսել սեպտեմբեր – հոկտեմբեր ամիսները, մեծացնել տևողությունը ևս երկու շաբաթով:
- ✓ Հերբարիումի համար հավաքել նաև տվյալ ծառերի պտուղները, հնարավորության դեպքում նաև ծաղիկները: